Նույն հեղինակը տեղեկություններ է հավաքել և մելիքների գործ դրած պատիժների մասին, որոնք երբեմն շատ դաժան էին լինում։ Մելիքները բանտարկում էին գոմում կամ հացի հորում, առնում էին տուգանք, որ մնում էր իրենց օգտին։ Վճարել անկարող եղողների վերաբերմամբ դիմում էին խիստ միջոցների՝ ծեծում էին, երբեմն ծառից կապելով կամ ոտները փալախկայի մեջ դնելով և ճիպոտավ թակելով, գետնին էին տապալում և կոխկրտում, երկարամորուք ծերունիների, նրանց զավակների հանցանքի համար, մորուքները հանգստում էին և մեջքին հարվածում՝ մինչև փրկանք առնելը, հանցավորին կապում էին ձիու պոչից և քաշ տալիս փողոցներով և գանակոծում. հանցավորի ականջները գամում էին ծառին։ Թեև այս պատիժներից մի քանիսը սկսել էին վերանալ, սակայն այնուհետև Հանի մշակած օրենքով թույլ էր տրվում ծեծի ենթարկել նույնիսկ մահմեդական կանանց[5]։

Մելիքական իրավունքները գաղափար են տալիս նախորդող շատ ավելի հին ժամանակների սովորությունների մասին, որոնց մնացորդներն են։ Նույնպիսի հնության հետքեր է կրում և մելիքների այն նիստ ու կացը, որի մանրամասնությունները մնում էին ծերունիների հիշողության մեջ մինչև անցյալ դարի վերջը։ Ե. Լալայանը, չկարողանալով գտնել գրավոր աղբյուրներ՝ այդ կենցաղը նկարագրելու համար դիմել է Մելիք-Թանգյան և Մելիք-Սաֆրազյան տների ծերունիների օգնության, այն է Սիսիանում Մելիք-Թանգի Բ-ի եղբայր և վերջին մելիք Ղուկասի որդի Կարապետ-բեկի և Մելիք-Սաֆրազյանների վերջին մելիք Դավթի թոռան՝ Իսկանդար-բեկի, ինչպես և Զանգեզուրում (Գորիսում) Մելիք-Հուսեյինյան Մանուչար-բեկի օգնության[6]։ Նրանց հիշողության մեջ դեռ թարմ պահպանվել էին իրենց մանկական և պատանեկան դիտողությունները, որոնց հիման վրա հետազոտողը[7] ձգտել է վերականգնել տարվա զանազան եղանակներին մելիքների հագած զգեստը, օրվա ռեժիմը առավոտվանից մինչև քուն մտնելը, լի և կիրակի օրերին, որսի և ճանապարհորդության ժամանակ։ Այդ կենցաղի պարզության մասին մի գաղափար է տալիս այն անեկդոտային դեպքը, որը պատմել են մեզ, իսկ մեզնից առաջ ևս Ե. Լալայանին[8] խնձորեսկցիք իրենց Փարմազ մելիքի մասին։ Իբր թե մի կիրակի օր գյուղացիք հավաքվում են մելիքի դռան առջև և խնդրում, որ դուրս գա իրենց դատերը կտրելու։ Նա չի կամենում դուրս գալ՝ և պատվիրում է՝ գալ մյուս կիրակի։ Երբ գյուղացիք շատ են պնդում և թախանձում, նա մերկ դուրս է գալիս և բարկանում թե՝ «Հալավս (շապիկս) լվացել էն, հալա չորացել չի, հի՞նչ էք զահլա տանում»։ Այս դեպքը որոշ չափով անհավատալի է թվում, քանի որ այս նույն Փարմազից պահպանվել է բավականին ճոխ և խնամքով կառուցված տունը, որի երեք քարայր դարաղամնէրը, ընդարձակ ընդունարանն ու ծառաների համար հատկացված սենյակները և մանավանդ ախոռը, որտեղ կարող են զետեղվել մեծ թվով ձիեր, շենքի բոլոր մասերը ցույց են տալիս տիրոջ ունևոր լինելը, մեծ երթևեկություն պահելը դրսի հետ և հյուրերի և իր ձիերի մասին ունեցած խնամատար վերաբերմունքը։ Այդ տունը, ինչպես

---

[5] Այս պատիժներից մի քանիսը գործադրվում էին գյուղերում և մելիքների իրավասության վերացումից հետո՝ տուգանումը, բանտարկումը, ծեծը, բայց գյուղական դատարանի և ֆոխվանների կարգադրությամբ։

[6] Գորիսում։

[7] Լալայեան Ե., Սիսիան, էջ 19—23։

[8] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 14։